№ 17 Հինգշաբթի Փետրվարի 13 — 1886 — Հինգշաբթի Փետրվարի 13 № 17

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1886** ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, չարաթը երեք անգամ, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք տեղական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, տասն և մէկ ամսվանը 9 ռուբլ, վեց ամսվանը 6 ռուբլ։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պավիլիօնում։ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտնվում է Բարօնակի և Բաղարնի փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը, № 12 բնակարանում։ Ուղղակի մուտքը Բաղարնի փողոցից է, Բէմէլէնեանց Ուպրավայի դիմաց։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ «Մշակին» գրվելով կարելի է վճարել 25 ֆրանկանոց թղթադրամով։

Թիֆլիսում «ՄՇԱԿԻ» համարները հատով ծախվում են 7 կոպէկով պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պավիլիօնում, պ. ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ծխախոտի մագազինում (Կովկաս հիւրանոցի տակ) և պ. ԱԼԻԽԱՆՈՎԻ ծխախոտի մագազինում (Վ. օրօնցովի արձանի դիմաց)։

Ցայտարարութիւնները, ամեն լեզուներով, ընդունվում են ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ մօտ։ Ցայտարարութիւնների իւրաքանչիւր բառին վճարվում է 2 կոպէկ։

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, բաց է ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, իսկ կիրակի օրերը առաւօտեան 10—12 ժամ։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Հասցէն փոխելու ժամանակ պէտք է ուղարկել խմբագրութեանը 28 կոպէկ կամ 4 հատ 7 կոպէկանոց փոստային մարկա։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւն։ «Արձագանք» չարաթաթերթի յօդուածը։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Պարսկաստանից։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ամսիս 7-ին ես առիթ ունեցայ ներկայ լինելու արդէն երեսուն տարուց ի վեր Թիֆլիսում գոյութիւն ունեցող Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան նստին։ Երեկոյեան ժամը $7^3/_4$-ին մըտայ ընկերութեան դահլիճը, որտեղ միշտ լինում են ընկերութեան ժողովները։ Անդամների դեռ շատ փոքր մասն էր ներկայ, թէև նշանակած ժամից արդէն անց էր։ Մտնելով այդ դահլիճը, մարդ ընկնում է մի գեղեցիկ տպաւորութեան տակ, զգալով, որ գտնվում է մի այնպիսի տեղ, որտեղ թագաւորում է գիտութիւնը, որտեղ մարդիկ ծառայում են ընդհանուրի շահերին գիտութեան միջոցով։ Եւ այդ տպաւորութիւնը շատ ազդու է, մանաւանդ Թիֆլիսում, որտեղ հասարակական—ընկերական կեանքը դեռ շատ անախորժ կողմեր ունի։ Մտնելով գիւղատնտեսական ընկերութեան դահլիճը, դուք կարող էք փոքր ի շատէ դաղափար կազմել Կովկասի դրութեան մասին։ Դահլիճի պատերը զարդարված են կենդանաբանական, բուսաբանական և աշխարհագրական քարտէզներով։ Պահարաններում ամփոփված են զանաւորապէս Կովկասի հարուստ բնութեան նմուշները։ Մի տեղ դուք ծանօթանում էք Կովկասի շրջապատութեան գործի հետ, միւս տեղ ձեր առաջ բացվում է Կովկասի այգեգործութեան վիճակը. մի պահարանի մէջ զետեղված են զանազան մանդարաց նիւթեր, միւսի մէջ զանազան պտուղներ, մի պահարան նշանակված է ամենայն տեսակ սերմերի համար, միւս պահարանը դիտելով դուք ծանօթանում էք ժողովրդական բժշկականութեան հետ, թէև, ի հարկէ, այդ բոլոր ժողովածները դեռ հեռու են կատարեալ լինելու վիճակից։

Ժամը 8-ին նախագահը՝ պ. Խատիսով, բացեց ժողովը. ներկայ էին տասն և մէկ անդամ։ Քարտուղարը կարդաց անցեալ նստի արձանագրութիւնը, որը ընդունվեցաւ և վաւերացվեցաւ։ Ապա նախագահը կարդաց այս տարվայ համար կազմված նախահաշիւը, որի զլխաւոր կէտերի հետ աւելորդ չէ ծանօթացնել ընթերցողներին։ Ընկերութեան տարեկան մուտքը կը լինի 27,315 ր. 47 կ.։ Այդ գումարը կազմվում է շատ աղբիւրներից, որոնցից գլխաւորներն են՝ ընկերութեան առձեռն ունեցած գումարը 8,801 ր., դանձարանից ստացած 6,000 ր., նախարարութիւնից՝ այգեգործութեան ուսումնարանի չինութեան համար 2000 ր., նախարարութիւնից այգեգործութեան ուսումնարանի պահպանութեան համար 2,332 ր., Թիֆլիս քաղաքից նոյն ուսումնարանի համար սպասվում է 2,000 ր., ապա անդամակցական վճարը, չերամի սերմի և վաճառելու համար որոշած բոյսերի արդիւնքը և այլն։ Նախահաշիվի մէջ ծախք նշանակված է 23,376 ր. 23 կ., այդ գումարից զանազան նպատակայարմար գրուածքների հրատարակութեան և գրողների վարձատրութեան համար 2,000 ր. է նշանակված։ Խորհրդի կազմած նախահաշիւը ընդհանուր ժողովի կողմից մի քանի փոփոխութեան ենթարկուեցաւ և ընդունվեցաւ։ Գիւղատնտեսական ընկերութեան այս տարուայ գործունէութեան մէջ չէ կարելի առանձնապէս չը յիշել ընկերութեան որոշումը այս տարի բանալու այգեգործութեան ուսումնարան Թիֆլիսի Մուշտաիդ կոչուած այգու դիմաց գտնվող ընկերութեան բուսաբանական այգիում։ Դա, ի հարկէ, մի այնպիսի քայլ է, որպիսի քայլեր վաղուց արված պիտի լինէին մեր երկրի արդիւնաբերութեան խնդիրը կարդի բերելու ծանրակշիռ նպատակի համար։ Այգեգործութեան ուսումնարանի մէջ տասն աշակերտ կը սովորեն և կը կերակրվեն ընկերութեան հաշիվով։ Ուսումնարանի չինութեան, այլ և ուսումնարանի և այգու պահպանութեան ծախք նշանակված է 15,045 ր., այդուց և ուսումնարանից մուտք սպասում է ընկերութիւնը նոյնքան՝ 15,045 ր. Ցանկալի է որ ուսումնարանը լինի օրինակելի, ունենար իր բազմաթիւ յաջողդները և կարողանար այնպէս պատրաստել իր սաները, որ նրանք կարող լինէին նպատակին ծառայել։

Նախահաշվի խնդիրը վերջացնելուց յետոյ, որի մասին պէտք է նկատել, որ ծախքերը շատ էլ նպատակայարմար կերպով չեն բաժանված, ընդհանուր ժողովը զբաղվեցաւ պ. Տէր-Պետրոսեանի զեկուցման քանի մի կէտերի քննութեամբ։ Պ. Տէր-Պետրոսեանի զեկուցումը, որը կարդացուեցաւ անցեալ նիստերից մէկում, վերաբերում է Շօրագեալի շրջանի գիւղացիների տնտեսական աղքատութեան և այն միջոցներին, որոնցով նա կարելի է համարում լաւացնել գիւղացիների թշուառ վիճակը։ Ինչ կարծիք որ վաղուց հասել է ժամանակը ճանաչելու գիւղացուն, իմանալու նրա ցաւերը և այդ ցաւերին դարման անելու միջոցները։ Գիւղատնտեսական ընկերութեան նպատակը մեծ է և գովելի, քանի որ ընկերութիւնը իր նպատակով չօչափում է այն մեծ խնդիրը, որպիսին է մեր երկրի արդիւնաբերութեան գործը, և որի առաջ եթէ այսօր չէ խոնարհվում, վաղը անպատճառ կը խոնարհվի մեր երկրի կապիտալը և մինչև իսկ վաճառականութիւնը։ Ինչ կարծիք, որ այդ ուղղութեան ուսումնասիրութիւնը աւելի մօտիկ է գիւղատնտեսական ընկերութեան գոյութեանը։ Սակայն կարելի է ասել արդեօք, որ գիւղատնտեսական ընկերութիւնը իր երկարամեայ գոյութեամբ դրական, գործնական կերպով է դիմել իր նպատակին։ Պ. Տէր-Պետրոսեանի զեկուցումը հարուստ նիւթեր է պարունակում Շօրագեալի գիւղացիների դրութեան մասին։ Այդ տեսակ ուսումնասիրութիւնները չնորհակալութեան են արժանի։ Պարտի առաջարկած միջոցները՝ բարելաւելու գիւղացիների վիճակը, սոսկում են մեզ մտածել և համոզվել, որ իսկապէս մեր երկիրը բոլորովին չէ ուսումնասիրված։ Զեկուցանողը, ի միջի այլոց, առաջարկում է անտառներ տնկել և Շօրագեալի ժողովրդի մի մասը գաղթեցնել ուրիշ տեղեր, օրինակ Կարսի կողմերը։ Հասկանալի է, որ ընդհանուր ժողովը այս միջոցներին հաւանութիւն չէր կարող տալ, և ոչ էլ տուաց, քանի որ անտառներ տնկելը և ժողովուրդ գաղթեցնելը այնքան դժուար և ծանր միջոցներ են, որ այդպիսի միջոցներին դիմելու համար, բացի բազմակողմանի ուսումնասիրութիւնից և նիւթական մեծ միջոցներ են անհրաժեշտ։ Բայց ով կարող է ասել, որ Կովկասում Շօրագեալից աւելի աղքատ տեղեր չը կան, որտեղ բնակիչները «հաց չունեն ուտելու և շոր չունեն հագնելու»։ Կան տեղեր, որտեղ հարկաւոր կը լինի ժամանակով անտառներ դցել. կան տեղեր էլ դուցէ, որտեղից ժամանակով պէտք կը լինի ժողովուրդը գաղթեցնել։ Բայց ամենից առաջ ընդհանուր մեծ միջոցների դիմելու համար անհրաժեշտ է ամբողջ Կովկասը ուսումնասիրել, իմանալ նրա պահանջները, իմանալ իւրաքանչիւր տեղի ցաւերը և պահանջները։ Ճշմարիտ է, Կովկասի շատ կողմերի աղքատութեան պատճառը բնութեան աղքատութիւնը, ջրի պակասութիւնը, հաղորդակցութեան ճանապարհների բացակայութիւնն է։ Սակայն, ինչպէս շատ իրաւացի կերպով նկատեց և ընկերութեան նախագահը, մեր ժողովրդի բարօրութեան համար ամենից առաջ պէտք է բարձրացնել նրա տնտեսական պարապմունքների անկեալ վիճակը, պէտք է տալ ժողովրդին տնտեսագիտական զարգացումն։

Տեսնք թէ ինչ անկեալ վիճակի մէջ են Կովկասի չերամապահութիւնը, բամբակագործութիւնը գինեգործութիւնը և այլ տեսակ պարապմունքները։ Գիւղացին չէ կարողանում հողից և իր աշխատանքից խելացի կերպով օգտվել, և ամենից առաջ դրա վրա պէտք է ուշը դարձնել։ Մեր գիւղացիների տնտեսագիտական զարգացումը այնքան չնչին է, Կովկասը այնքան քիչ է ուսումնասիրված, որ շատ վաղ է կռիւ սկսել բնութեան սիրված, որ շատ վաղ է ժողովուրդը գաղթեցնել, և անտառներ տնկել, որի համար այժ էլ չը կայ։ Եւ միթէ պ. Տէր-Պետրոսեանը լիքը չը գիտէ, որ Շօրագեալի գիւղացիների տնտեսագիտական զարգացման համար ոչինչ չէ արված, որտեղ, ինչպէս և շատ տեղեր, մուտք չեն գործել կանոնաւոր տընտեսագիտութեան տարրական հիմունքները։ Միւս կողմից դրական միջոցների դիմելու համար, գործով ժողովրդեան նպաստելու համար, ծայրայեղութիւնների մէջ չընկնելու համար, դեռ հարկաւոր է մեծ եռանդով և մեծ ոյժերով ուսումնասիրել մեր երկրի ամբողջութիւնը, հարկաւոր է որոշ դաղափար կազմել մեր երկրի ընդհանուր դրութեան մասին։ Եւ այն ժամանակ կարելի կը լինի միայն հաստատ կերպով խորհել այս կամ այն տեղի, այս կամ այն ժողովրդի տնտեսական բարելաւութեան մասին, տեղական պայմաններին յարմար միջոցների մասին։ Այդ լաւ գիտեն Գիւղատնտեսական ընկերութեան անդամները, և ընդհանուր ժողովում շատերը անկեղծօրէն խոստովանում էին, որ ընկերութիւնը չունի որոշ դաղափար մեր երկրի ժողովրդեան կեանքի մասին, որ մեր երկիրը դեռ չէ ուսումնասիրված այնքան, որ կարելի լինէր առաջարկված միջոցների վերաբերմամբ մի հաստատ դիրք բռնել։

Բայց արդեօք դրանում մեղաւոր չէ նոյն իսկ ընկերութեան երկարամեայ գործունէութեան ընթացքը և ուղղութիւնը։ Սիմիայն Թիֆլիսում ընկերութիւնը հազիւ թէ կարող է ժողովներ անելով բազմակողմանի կերպով ուսումնասիրել ամբողջ երկրի ժողովրդի կեանքը և ժողովրդին օգնելու դաւելի ցանկութիւնը իրագործել։ Այդ շատ լաւ գիտեն ընկերութեան անդամները, որոնցից իւրաքանչիւրը ունի քաղաքում իր առանձին պարապմունքը և ամիսը երկու անդամ միջանկեալ կերպով ժողով դալով ժողովրդեան կեանքը ուսումնասիրած լինելուց շատ հեռու կը մնան։ Դեռ չեմ խօսում այն մասին թէ ինչ գործնական միջոցների դիմեց ընկերութիւնը, նոյն իսկ ժողովրդեան մէջ առաջ մղելու մեր երկրի չերամապահութիւնը, գինեգործութիւնը և այլ պարապմունքները։ Մասնաւորական ձեռնարկներ հրատարակելը լաւ է, բայց բաւական չէ։ Ինչ է արել ընկերութիւնը ծանօթանալու համար մեր երկրի վերքերին և այդ վերքերի պատճառներին։ Ընկերութիւնը չունի այնպիսի անդամներ, որոնք յատկապէս նշանակված լինէին պտտելու զանազան կողմեր և ծանօթանալու ժողովրդի վիճակին։ Սպասել որ պատահական կերպով անդամներից մէկը կամ միւսը զեկուցումն տայ այս կամ այն նիւթի մասին,—բաւական չէ։ Միթէ չէր կարելի կազմել ծրագիրներ և դիմել նոյն իսկ ժողովրդեան մէջ ապրող՝ կարող անձանց, օրինակի համար ուսուցիչներին, որ վերջինները յայտնի ծրագրով ուսումնասիրեն տեղական կեանքը և թղթակցեին։ Ընկերութիւնը չունի մշտական թղթակիցներ։ Ընկերութիւնը թէև ունի իր ամսագիրը—օրգանը, բայց չունի ոչ մի օրգան մի տեղական լեզուով։ Ընկերութիւնը չունի մշտական գործող անդամներ։ Բայց անհերքելի է, որ ժողովրդին օգնելու համար պէտք է նրա մէջ մտնել, նրան ճանաչել և այնտեղ գործել։ Եւ այդ պատճառով Աղդաշում հիմնելիք չերամատունը աւելի օգուտ կը տայ, քան հարիւրաւոր ձեռնարկներ, յօդուածներ և յայտարարութիւններ։ Պարզ է, որ ժողովրդական կեանքի ուսումնասիրութիւնը արագ կերպով առաջ չի գնայ, քանի որ վարձատրութիւն աշխատողների և աշխատութիւնների հրատարակութեան համար ամբողջ 23 հազար ռուբլ ծախքից նշանակված է 2,000 ր.։ Այդպիսով, ի հարկէ, ընկերութիւնը հեռու չի գնայ,—եթէ ցանկանայ էլ հրաշքներ գործել։

Մ.

«ԱՐՁԱԳԱՆՔ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՅՕԴՈՒԱԾԸ

Քաղաքիս հայերը 14 տարի չարունակ ջրանցքի խնդրով զբաղուելուց յետոյ, անթիւ մանաժողովներ կարգելուց յետոյ, վերջապէս անցեալ տարի որոշեցին տիրապահ Թիֆլիսին ջրանցք շնորհել։ Այս վէճը մեծ բերկրութիւն պատճառեց աղդարնակութեան. արդարև ջրանցքը լրացնում է մի անհրաժեշտ կարիքութիւն ունեցող պահանջ. և, առողջապահական տեսակէտից մեծ օգուտ բերելով բնակիչներին, կարող է մեծամեծ շահեր խոստանալ քաղաքին, գրաւելով դէպի մեր գեղեցիկ և հանգստեան ջրերով հարուստ Թիֆլիսը և օտարականներին։

Բայց ջրանցք կառուցանելու համար երեք բան է հարկաւոր. առաջին՝ փող, երկրորդ՝ ստակ և երրորդ՝ դրամ։ Արդ՝ քաղաքը, իւր բնակիչների մեծագոյն մասից հետ չը մնալով, սեփական դրամագլուխ չունի, այլ ունի պարտքեր։ Զը հաշվելով մանր պարտքերը, Թիֆլիսը մտնելով

1881 թվականի հունվարի 20-ին տեղի ունեցավ Ռուսական կայսրության ամենամեծ հեղափոխական կազմակերպությունը՝ «Ժողովրդական կամք» կազմակերպությունը։ Նրա ստեղծումը նշանակում էր նոր դարաշրջան ռուսական հեղափոխական շարժման պատմության մեջ։ Նոր դարաշրջան՝ ինքնակալության դեմ ուղղված պայքարում։ Նոր դարաշրջան՝ ինքնակալության դեմ ուղղված պայքարում։ Նոր դարաշրջան՝ ինքնակալության դեմ ուղղված պայքարում։

Ռուսական ինքնակալությունը, ինչպես հայտնի է, 1861 թվականին ստրկատիրական ճորտատիրական հարաբերությունների վերացումից հետո, ինչպես նաև 1863 թվականի Լեհաստանի ազգային-ազատագրական ապստամբությունից հետո, ինչպես նաև 1866 թվականի Դմիտրի Կարակոզովի կողմից Ալեքսանդր II-ի դեմ կազմակերպված մահափորձից հետո, ինչպես նաև 1871 թվականի Փարիզի Կոմունայի ճնշումից հետո, ինչպես նաև 1873 թվականի տնտեսական ճգնաժամից հետո, ինչպես նաև 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո, ինչպես նաև 1879 թվականի աշնանը Ալեքսանդր II-ի դեմ կազմակերպված մահափորձերից հետո, ինչպես նաև 1880 թվականի գարնանը Ալեքսանդր II-ի դեմ կազմակերպված մահափորձերից հետո, ինչպես նաև 1880 թվականի աշնանը Ալեքսանդր II-ի դեմ կազմակերպված մահափորձերից հետո, ինչպես նաև 1881 թվականի մարտի 1-ին Ալեքսանդր II-ի դեմ կազմակերպված մահափորձից հետո, ինչպես նաև 1881 թվականի մարտի 13

Մասնացոյց արած յօդուածներում ձեր՝ յայտնած ցանկութիւնը, յարգելի խմբագիր, օգնել մեզ այդ հարցում թէ խօսքով և թէ գործով, այդ գործին նոր եռանդ կարող կը լինի տալ և առաջ տանել, հաւատացած լինելով, որ այս անգամ այդ հարցը վերջաւորութիւն կունենայ։

Ընդունեցէք և այլն. Արհեստաւորաց ուսումնարանի դիրեկտոր

Ն. Խարկով

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս շաբաթ օր, փետրվարի 15-ին, ԹԻՖԼԻՍԻ թատրոնում ֆրանսացի երևելի ձեռնածու պ. Կազընեով տալու է մի ներկայացումն։ Պ. Կազընեով չորս տարի սրանից առաջ Թիֆլիս եղած ժամանակ, դրաւում էր մեր հասարակութիւնը իր դեղեցիկ և հետաքրքիր ներկայացումներով։ Հաւատացած ենք որ և այս անգամ նա նոյն աջողութիւնը կունենայ մեր քաղաքում։ Պ. Կազընեով խոստանում է իր այս ներկայացմանը համար բոլորովին մի նոր պրոգրամ։

—

Լսում ենք, որ Ախալցխայի յաջորդ Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէն ս. Սինոդի հրամանով թողնում է Ախալցխայի յաջորդութիւնը և ուղարկվում է Հաղբատայ վանքը։

—

Մեր նկարիչ Գէորգ Բաշինջաղեանի տաղանդը առաջադիմութիւններ է անում։ Այս օրերս նրա վրձինի տակից դուրս եկաւ դարձեալ մի նոր, դիրքով բաւական մեծ պատկեր «Զիաուրեան անտառը ձմեռ ժամանակ։» Պատկերի առաջին պըլանի վրա երևում են կուսական անտառի հաստ ծառեր, որոնց տակը նստած են երկու լեզգիներ, անտառի մէջտեղով անցնում է ճանապարհ, որ տանում է շատ հեռու և կորչում է լայնատարած անտառի պերսպէկտիվայի խորքերում։ Նայելով այդ պատկերի վրա, ուզում էք միշտ աւելի և աւելի հեռու թափանցել ձեր հայացքով անտառի խորքերը, բայց քանի նայում էք, անտառը ձեզ աւելի և աւելի անվերջանալի է երևում։ Ձիւնի սպիտակ սաւանով ծածկած ամբողջ տեսարանը մի պարզ սպիտակ լոյս, բոլորովին ուրիշ լոյս է տալիս այդ պատկերին, քան թէ այն լոյսը, որով Բաշինջաղեանը մինչև այժմ սովորութիւն ունէր լուսաւորել իր նախկին պատկերների մեծ մասը, այսինքն լուսնի դեղնագոյն լոյսը, որ այդքան աջողվում էր մինչև մեր նկարչին։ Այդ մեծագիր նկարչութիւնը, որքան յիշում ենք, Բաշինջաղեանի առաջին նկարչութիւնն է, որի վրա ոչ ջուր կայ, ոչ էլ լուսնի լուսաւորութիւն։ Բայց և այդ նոր բնաւորութեան սկիզբը աջողվել է մեր նկարչին։

—

«Кавказъ» լրագիրը լսել է, որ մի քանի անձինք դիտաւորութիւն ունեն հիմնել ԹԻՖԼԻՍՈՒՄ կովկասեցի չքաւոր ուսանողներին օժանդակող մի ընկերութիւն, որի համար դիտաւորութիւն ունեն թոյլատրութիւն խնդրել կառավարութիւնից։

—

Ստացանք ս. Էջմիածնի մէջ հրատարակվող «Արարատ» ամսագրի այս տարվայ առաջին համարը, այսինքն յունվարի տետրակը։

—

Մեզ գրում են ՇՈՒԼԱՎԷՐ գիւղից հետևեալը։ «Բօրչալու գաւառում գտնվող մեր Շուլավէրը, որ այդ գաւառի ամենամեծ գիւղն է, մինչև այժմը իր սեփական ջուր չունէր։ Այժմ վերջապէս վճռված է այդ հարցը։ Ցոյներին տուած է կապալով, 4500 բուբլով, գիւղից մօտիկ գտնվող Բինիձոր կոչված անտառում բղխող Բըլբըլան և Հաճարկուտ աղբիւրների ջուրը գիւղ հասցնելը։ Այդ ջրերը համեղ, թեթև և առողջարար են։ Այդ ջրերի երկու խողովակ կունենանք երկու թաղերում։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Լսում ենք որ մեզանում մշակվում է մի նոր ծրագիր Երևանի կլուբի համար, որի զօրութեամբ կլուբի անդամները պէտք է լինեն յայտնի պաշտօնի և ծագումի տէր մարդիկ։ Նրկայ քաղաքային կլուբի անունն էլ կամենում են փոխել և նրանից աղնուական կլուբ (дворянскій клубъ) դարձնել։»

—

«Արարատ» ամսագրում կարդում ենք Սինոդի հետևեալ կարգադրութիւնը։ «Սինոդը ի նկատի ունենալով Բաղուի քաղաքի հասարակութեան խնդիրը և Շամախու կոնսիստորիայի միջնորդութիւնը, որոշեց հրամայել Յովակիմ Գնդամեանին ձեռնադրել քահանայ։» Գնդամեանը յայտնի է որպէս «Մեղու Հայաստանի» լրագրի աշխատակից։ Շնորհաւորում ենք Բաղուի հայերին։

—

Երկաչարթի, փետրվարի 11-ին, նախկին Արծրունու թատրոնում հայ դերասանական խումբը, մասնակցութեամբ մեր յայտնի դերասան պ. Ադամեանի տուաց Գուցկովի «Ուրիէլ Ակոստա» դրաման հինգ գործողութեամբ։ Այս անգամ ևս պ. Ադամեանը Ուրիէլ Ակոստայի նշանաւոր դերում միջոց ունէր ցոյց տալու իր բաղմազան տաղանդը և իրաւ որ յուսախաբ չեղանք մենք։ Պ. Ադամեանը իր այդ խաղով ապացուցց թէ որքան ընդունակ է նա մարդկային հոգեկան յուզմունքների և խռովութիւնների ամենանուրբ արտայայտութիւնները ցոյց տալ թէ իր դէմքի վրա և թէ իր ձեռքի մէջ։ Այս անգամ ևս թատրոնը լիքը չէր, այնպէս որ օթեակներից միայն երկուքն էին ծախված, չը նայելով որ տեղերի գները պակասեցրած էին։ Չը կարողանալով բացատրել մեզ հասարակութեան այդ անտարբերութեան պատճառը դէպի հայոց թատրոնը ընդհանրապէս և դէպի մի այդպիսի առաջնակարգ դերասան, որպիսին պ. Ադամեանն է, մասնաւորապէս, մենք յիշեցինք, որ այդ երեկոյ հայոց կլուբում նշանակված էր ձրի կոնցերտ կլուբի անդամների համար և մեզ համար ամեն բան բացատրվեց...։ Ի հարկէ Թիֆլիսի հայ հասարակութիւնը ձրի, մ ո ւ ֆ թ ա բանը չի թողնի և չի գնայ մի այնպիսի տեղ, ուր պէտք է փող վճարի...

—

Հինգշաբթի, փետրվարի 13-ին, հայ-դերասանական խումբը, մասնակցութեամբ յայտնի դերասան պ. Ադամեանի, հասարակութեան խնդրանօք, երկրորդ անգամ կը տայ Արծրունու թատրոնում «Գին» դրաման, 4 գործողութեամբ, հեղինակութիւն Ա. Դիւմայի։ Տոմսակները կարելի է գնել թատրոնի կասայում։

—

Ուրբաթ, փետրվարի 14-ին, նախկին Արծրունու թատրոնում, հայ նորակազմ դրամատիքական խումբը կը տայ ըմենեֆիս պ. Գ. Տէր-Դաւթեանի «Բեխերով կին» կոմեդիա, 3 գործողութեամբ և «Կարմիր բրիւկ» վոդեվիլ 1 գործողութեամբ։ Պ. Արտաշէսը կերգէ «Եօթն օր եօթ գիշեր», պ. Խօջամիրեանը հայկական հագուստով կը կարդայ «Վով որ մեզ տեսաւ»։ Անտրակտներում կը նվագէ երգիչ Զիվանին իր ֆիսգարմոնիայով։ Սկիզբն է 8 ժամին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դաւրէժ, 18 յունվարի։

«Մշակը» միշտ եղել է հասարակութեան ձայնի արձագանք և ընդմիշտ պաշտպանել է հասարակութեան շահերը։ Ուստի և ներկայ նամակս ուղարկելով «Մշակի» պ. խմբագրիդ, խնդրում ենք սրա հրատարակումը, որով դուցէ վերջ դրվի այն բոլոր տարաձայնութիւններին, որ մի տարուց աւելի է տեղիք ունի Ատրպատականի հայ հասարակութեան և հայր Ճերմակեանի մէջ։

Իսկապէս ասած հ. Ճերմակեանի առաջնորդութիւնը ոչ թէ մի դժբաղդութիւն, այլ մի հարուած պէտք է նկատել Ատրպատականի համար։ Ս. Էջմիածնի միաբանութիւնը, կարծում ենք, թէ չը ճանաչելով և չուղելով իր մէջ պահել մի այսպիսի անփորձ վարդապետ, մի կերպով իր գլխից հեռացրեց՝ ի բացակայութեան կաթողիկոսի և առժամեայ կառավարչի պաշտօնով ուղարկեց Դաւրէժ։ Հ. Ճերմակեանը թէև Վենետիկի հրաչակաւոր վանքից է, բայց չէ համոզվում հասկանում գործով ոչ Խորէն Լուսինեանին, ոչ Օրմանեանին և ոչ այդ դասակարգի ուրիշ բարեջան հոգևորականներին, որոնք գործում են անդադար ազգի բարեշինութեան համար։ Հ. Ճերմակեանը այն դասակարգի վարդապետներից է, որ միայն քարոզելով եկեղեցու բեմից հնազանդութիւն, խոնարհութիւն և անդոյման հպատակութիւն, գրանցով է միայն բաւականանում։ Նրա համար այլ ևս նշանակութիւն չունի մի որ և է ազգային գործ, մի առաջարկութիւն կամ մի օժանդակիչ նպատակ։ Նա իսկոյն իր դիմացի առաջարկողին պատասխանում է թէ՝ «Այդ քո խնդրի բան չէ» և այլն և այլն։ Այսպիսի խօսքերով ահա բոլոր ազգային գործիչներին մի առ մի հեռացնելով ասպարէզից, բոլորը կաշկանդելով, ինքն բուն նման մենակ նստեց առաջնորդարանում և միայն իր եկամտի աղբիւրներին յառաջադիմութիւն տուաց, ազգային գործերը տատամսութեան մատնելով։

Գործերի ահա այս խառն դրութեան մէջ, դուրս է գալիս մի որ և է անձն, «Մի հայ» ստորագրութեամբ և «Մեղուի» անցեալ տարուայ 99 համարում Ղարադաղի հայոց անցքը պատրուակ ընելով, հայր Ճերմակեանին ոչ թէ պաշտպանում, այլ մինչև երկինքն է բարձրացնում։ Բայց այդ «Մի հայը» մենք հասատ ստուգելուց յետ, հաստատ ասում ենք, որ ինքն հ. Ճերմակեանն է, որովհետև Դաւրէժում ոչ մի հատ «Մի հայ» չէք գտնի, որ իրան դժբաղդութիւն չը համարէ հ. Ճերմակեանին պաշտպանելու, այն էլ լրագրում։

Ոչ մի բան համարեա թէ լրագրի յարգը այնքան վայր չէ ձգում, որքան անխոհեմ, անստոյգ գրող և անձնական կրքերից չարժուած թղթակիցը, որ հասարակութեան մէջ յարգ չը գտնելով, աշխատում է հասարակութեան գործիչների յարգը վայր ձգել և այդպիսով չատերի զզուանքն է յարուցանում և լրագրութեան յարգն էլ կոտրում է հասարակութեան մէջ։

Եթէ «Մեղուի» թղթակից «Մի հայի» նպատակն է Ղարադաղի անցքի մասին վեհափառ Շահի արդար դատաստանը նկարագրել, ինչու մի քանի խօսք ասելուց յետ անմիջապէս յարձակվում է մի քանի աղաների վրա, ասելով թէ՝ «սրանք ազդեցութիւն լանացնելով ժողովրդեան վրա, առաջնորդի բարոյական ուժերը ջլատում են», որպէս զի առիթ ունենայ Ճերմակեանին արդարացնելու. բայց ինչու չէ ասում թէ՝ երբ զարթաղցիք իրանց դատի համար չորս պատգամաւորներ էին ղրկած Թէհրան վեհափառ Շահին ներկայանալու համար, որոնց թւումն էր և քաջագործ Սարքիս-բէկ Մէլիք-Զհանեանցն, այդ դէպքում հ. Ճերմակեանը Դաւրիժում յայտնի կերպով Ղարադաղի հայերի գործն մի մնոտի և սուտ բան համարելով, Ղարադաղի աւազակ խաներին պաշտպանում էր պարսից մեծամեծներից բարիք և պարգև ակնկալելու յուսով։

Ցաւ է բոլորովին, որ իրը ժողովուրդը պահ եղած լինի հայր Ճերմակեանից, որովհետև ամբողջ Ատրպատականի ժողովուրդը, թէ քաղաքացի և թէ գաւառացի, չեն սիրում նրան։ Եթէ կան ոմանք, որ կեղծաւորութեամբ պատում են նրան, դրանք էլ պարտաւորեալ որ և իցէ մէկ պատճառից և կամ երկիւղ են կրում նրա մատնութիւններից։ Նոյն իսկ այս ս. ծննդեան տօնին, ուր սովորաբար պէտք է զինի պատարագի խառնուն բաղմութիւնը դիմէր առաջնորդարան, ամբողջ հայ հասարակութիւնն լաւ համարեց ցըրվիլ քան առաջնորդարան մտնել և Ճերմակեանի աչը համբուրել. հետևապէս ոչ ոք մաւ առաջնորդարան։

Թող «Մի հայը» փաստերով ցոյց տայ տեսնենք՝ Ելր է եղել որ հ. Ճերմակեանը այս ինչ բարի գործն է առաջարկել կամ չնել, իսկ ազաները այդ դէպքում այս և այն ընդդիմադրութիւն են արել կամ քանդել. ընդհակառակն հոգևորականն պատուելով հ. Ճերմակեանին, բոլոր դէպքերում նրան խորհուրդ հարցնելով, առաջարկութիւններ արել են, իսկ հ. Ճերմակեանը միշտ պատասխանել է թէ՝ «Այդ ձեր գիտնալու բանը չէ» և այս մենք փաստերով կարող ենք ապացուցանել։ Նոյն իսկ ներկայ հոգևորականութիւնը հ. Ճերմակեանի օրով քանիցս անգամ հրաժարական է տուել և ժողովուրդն է եղել նրանց հրաժարականը յետ դարձնողը, իսկ հ. Ճերմակեանը բնաւ հոգս չանելով այդ մասին, իր օգտին միայն նայում էր։

«Մի հայը» գրում է, որ «դպրոցի գրամագլուխը անհետանում է՝ մի քանի վաճառականների մանկութեան պատճառով, և թոյլ չեն տալիս առաջնորդին վանդից ազատելու»։ Առաջին՝ հ. Ճերմակեանը, ինչպէս ասացինք, որ և է մի ազգային գործի վրա չէ մտածում, որ այդպիսի մի դէպքում պիտանի լինէր, և երկրորդ՝ թող անհանգիստ չը լինի այն «Մի հայը», դպրոցի գրամագլուխը չի կորչի, և տոկոմները ժամանակին ստանալով գործադրվում են իր նպատակին։ Ենթադրենք մի բոպէ, որ հէնց մանկութեանց պատճառով դպրոցի գրամը վտանգի է ենթարկված, բայց միթէ գրանով «Մի հայը» կամ Ճերմակեանը կարգարանան։ Ով կարող էր զուշակել, որ դպրոցին նախանձախնդիր և նրա գրամագլուխը երեսուն տարիներից՝ ի վեր չանեցնող պարոններից մի երկուսը յանկարծ մանկ պէտք է յայտնվէին։ Այդ վաճառականները մեր քաղաքի ամենաապահով միջոցներն էին. չը լինելով երկրումս ոչ մի բանկ, ոչ մի հաստատ սեղանաւոր և ոչ մի գանձարան, ուրիշ ինչ տեղում պէտք է չանեցնէին դպրոցի գրամը, հարցնում ենք։

«Մի հայը» գրում է թէ «Առաջնորդը նորանով է միայն վատ, որ հոգաբարձուներից խիստ հաշիւ չէ պահանջում». իսկ մենք հարցնում ենք, միթէ հայր Ճերմակեանը իր օտարոտի զբաղմունքներից ազատ է, որ մի ժամ պարապվէր ազգային գործերով։ Պ. Թումանեանը իրանց սովորական ծախքերով չատ յարմար մի օրիորդական դպրոց կառուցին առաջնորդարանին կից մի տեղում և նուիրեցին ազգին. ամբողջ մի տարուայ ընթացքում հ. Ճերմակեանն հետաքրքիր չեղաւ թէ այս ինչ են չինում և ով է չինել տուողն, ուր մնաց որ նա պարապվէր ազգային հաշիւ պահանջելու կամ մի այլ ազդօգուտ գործերի համար կարգադրութիւն անելու։ Հոգաբարձուները իրանց գործառնութեանց հաշիւը իւրաքանչիւր տարի մինչև վերջին կոպէկը տուած են, և այժմ էլ միևնոյն հաշիւները պատրաստ են, ով ունի ցանկութիւն կարող է միշտ վերահասութիւն գործել, իսկ 1885 ամի հաշիւը նոյնպէս պատրաստ է և յաջորդող նոր առաջնորդի ներկայութեամբ կը տրվի։

«Մի հայը» առաջնորդների շուտ շուտ փոփոխութեան համար միայն մի օրինաւոր կարծիք է յայտնում, որի հետ մենք ևս համակարծիք ենք, բայց այն պայմանաւ որ մի օրինաւոր, խոհեմ և լուրջ գործող առաջնորդ լինի, ազգի բարին լաւ կշռադատող, և ոչ թէ հ. Ճերմակեանի նման օտարոտի ոմն։

Մենք մեր նախորդ առաջնորդների մեծագոյն մասի գործառնութիւններից և նրանց խոհեմ ընթացքից միշտ գոհ ենք եղած և այսօր էլ պատկառանքով ենք վերաբերվում դէպի նրանց թողած լաւ յիշատակները։

Ցնոց «Մի հայը» կամենալով հ. Ճերմակեանին փաստով պաշտպանել՝ նրա գրած շրջաբերականն է յիշեցնում, բայց այդ շրջաբերականով նա ինչպէս կարող է արդարանալ, մինչդեռ նա իր ասածների և քարոզածների հակառակն է գործում։ Մենք կարճ ենք կապում, իսկ եթէ համեստութեան սահմանից դուրս գալով կամենայինք հ. Ճերմակեանի բոլոր արարմունքները՝ ի դիր անցուցանել, հատորներ պէտք կը լինէին։ Վերջապէս մենք չենք տեսել մի այս տեսակ փառասէր հոգևորական, որ ամեն բանի վրա կարդինալական տեսակէտից է նայում։ Օրինակ, նրա եպիսկոպոսական զգեստներով պատարագ մատուցանելն մի օրինազանցութիւն է մի վարդապետի համար։ Իսկ ինչ կասէք եթէ հ. Ճերմակեանը 16—օրեայ թաղած ննջեցեալը գերեզմանից հանել տալով՝ ի հաճոյս ննջեցելու կնոջ, հրամայում է քահանային կնքեալ չլրիմը բացել և նրա մէջ արդէն հանգուցեալը հանել և մի այլ գերեզմանում թաղել։ Այս դէպքը տեղի ունեցաւ Ներկայ ամի յունվարի 11-ին նոյն իսկ Դաւրէժ քաղաքում լոյս ցերեկով։ Աւելացնում ենք, հ. Ճերմակեանի մեծի պահոց վերջին շաբաթում 14 անձանց ներկայութեամբ պատ ուտելն մեծ դայթակղութիւն էր, որ աշխատեց արդարանալ այսպիսի խօսքով, թէ «օրէնք՝ ի ձեռս առաջնորդաց են»։ Աւելացնում ենք դարձեալ, որ հ. Ճերմակեանը եկեղեցու բեմից հեղութիւն, դիմութիւն է քարոզում, իսկ ինքը պղտի վճարելու անկարող ժողովրդեան համար դանդատում է լիխանութեան։ Մի թղթի վրա վկայութիւն գրելու համար նախ ստանում է 4 կամ 5 ղուռն և ապա ստորագրում։ Ամենաանկարող մարդից էլ տասը ղուռն չը ստացած պատկի հրամանագիր չէ տալիս, և այլն, և այլն։ Այժմ թող «Մի հայը» պարծենայ թէ ինչ տեսակ առաջնորդի է պաշտպանում։

Մեր ազգային այս մեռեալ դրութեանը մի ճար գտնելու համար և որպէս զի ազատուենք այդ օտարոտի վարքով վարդապետի ձեռքից, նորահաստատ ամենայն հայոց կաթողիկոսին խնդրագիրը գրուեցան, որ բարեհաճի մեր վիճակից հեռացնել այդպիսի առաջնորդին։ Քաջալերս ենք որ նորին վեհափառութիւնը իր ազգասէր և հայրական խնամքը չի պակասցնի Ատրպատականի անխնամ վիճակից։

Հոգաբարձու Արամեան երկսեռ. դպրոցի։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աշխարհահռչակ ձեռնածու, վիեննացի պրոֆէսոր Հերման, որ իր կեանքի ընթացքում երկրագնդիս ամեն երկիրներում է ճանապարհորդել, ներկայացումներ է տուել թէ սպիտակ, թէ դեղին, թէ չագանակագոյն և թէ սև հասարակութեան առջև, որ խօսում է 14 լեզուներով, ներկայ թվի յունվար ամսին պէտք է տանէր Վիեննայում իր ծննդեան եօթանասունամեայ տարեդարձը։ Որպէս երևելի ձեռնածու Հերման միլիոնատէր է։

ներ է վաստակել և 1862 թվին չքեղ տուն է գնել իր համար Վիէննայի Օպէրնրինգ փողոցում, ուղիղ օպերայի թատրոնի դիմաց, և զարդարել է իր տունը մեծ ճաշակով, մի թանգարանի պէս։ Բայց 1873 թվի Վիէննայում պատահած տնտեսական սարսափելի ճգնաժամի ժամանակ Հերման կատարելապէս աղքատացաւ։ Նա նորից սկսեց ճանապարհորդել և ներկայացումներ տալ և այժմ կրկին մի չքեղ տուն ունի Վիէննայում, դարձեալ մուզէումի պէս սարքած և դարձեալ միլիոնատէր է։ Իր այդ թանգարանի մէջ նա ունի ամեն տեսակ թանգագին իրեղէններ և զանազան երկիրների ընկերութիւններից, թագաւորներից, մամուլի ներկայացուցիչներից, գիտնականներից և կանանցից ստացած ընծաներ։ Երեւելի ձեռնածուի կեանքից շատ անեկդոտներ են պատմում։ Մի անգամ Փարիզի կլուբներից մինում Հերմանին դիմում է Փարիզում յայտնի մի խարդախ թղթախաղացող, մի չուլլէր, ինչպէս ասում են, պ. Բ., խնդրելով Հերմանին իրան հետ թղթի խաղալու։ Խաղը 25 հազար ֆրանկի վրա պէտք է լինէր։ Հերման յայտնում է որ փող չունի, նա հանում է ծոցից մի թանգագին ժամացոյց, մի կայսրի ընծայ, որ 25 հազար ֆրանկից անհամեմատ աւելի արժողութիւն ունէր և դնում է սեղանի վրա։ Խաղը սկսվում է։ Բոլորը շրջապատում են խաղացողներին, նայելու համար ով պէտք է տանի՝ ձեռնածուն թէ չուլլէրը։ Այդ վերջինը յաղթվում է։ Հերման ստանալով չուլլէրից իր տարած 25,000 ֆրանկը, անմիջապէս նստում է այդ դումարը Փարիզի հիւանդանոցներից մինին։ Մի այլ պատմութիւն։ Մի օր Հերման ներկայացումն է տալիս Լիսաբոնում, Պորտուգալիայի թագաւորի, Դոն-Ֆերնանդոյի պալատում։ Նա խնդրում է թագաւորին լցնել վեց գնտակներով նրա սեփական ատրճանակը և դատարկել այդ բէվոլվերը ուղիղ իրան Հերմանի կուրծքին։ Թագաւորը երկար տատանում է։ «Արձակեցէք, ձերդ մեծութիւն, անվախ արձակեցէք, հաւատացնում եմ ձեզ որ ես չեմ մեռնի, ասում է ձեռնածուն։ Վերջապէս թագաւորը արձակում է բէվոլվերը վեց անգամ, Հերման մնում է կանգնած ծուխի մէջ, ոչ մի վերք չը ստացած և ժպիտը երեսին ցոյց է տալիս թագաւորին նրա արձակած գնտակներից հինգ հատը, որ ինքն բռնել էր ձեռքով, իսկ վեցերորդը անցել էր իր ականջի մօտով և ջարդել էր իր ետեից դրված մի փառաւոր հայելի։ «Ափսոս հայելին» ասում է Հերման, ինքն նորից լցնում է բէվոլվերը, արձակում է հայելու վրա,—և ահա հայելին նորից ամբողջ է։ «Ես կասկածում եմ որ դուք մարդ չէք, դուք իսկ և իսկ սատանայ էք», ասում է զարմացած թագաւորը։ Ձեռնածու Հերման շատ սիրված էր հանդուցեալ Աբդուլ-Ազիզ սուլթանից, որի հարեմում նա շատ անգամ ներկայացումներ էր տալիս իր Կ. Պոլիս եղած ժամանակ և իւրաքանչիւր ներկայացման համար սուլթանից ստանում էր 25 հազար ֆրանկ։ Մի օր Կ. Պոլսի փողոցներով անցնելով, Հերման պատահմամբ մտնում է մի հայի խանութ և տեսնում է այնտեղ մի հրաշալի ծոցի ժամացոյց։ Հայ վաճառականը երդվում է որ դա այնպիսի մի ժամացոյց է, որ ուղիղ դրա հատը միայն սուլթանն ունի իր ծոցում։ Հերման առնում է հայից մեծ գնով այդ թանգագին ժամացոյցը և ուղևորվում է սուլթանի պալատը, որտեղ նա այն օրը ներկայացում պիտի տար։ «Ձերդ մեծութիւն, հանեցէք ձեր ծոցից ձեր սիրած ժամացոյցը, յանձնեցէք նրան ձեր մեծ-վիզիրին և հրամայեցէք նրան ծովը նետել այդ ժամացոյցը։» Սուլթանը ատատնում է հրաժարվել իր սիրած թանգագին ժամացոյցից։ «Հաւատացնում եմ ձերդ մեծութեանը, որ ես ծովից կը հանեմ ժամացոյցը» մխիթարում է Աբդուլ-Ազիզին ձեռնածուն։ Ժամացոյցը ամենքի աչքի առջև նետվում է ծովը, սուլթանը տանում է ձեռքը դէպի իր ծոցը,—և ժամացոյցը կրկին իր ծոցումն է։ Հերման կարողացաւ ճարպիկ և աննկատելի կերպով դնել սուլթանի ծոցը հայից առած ժամացոյցը, որ սուլթանի սիրած ժամացոյցի հատն էր։ Իսկայանը ի հարկէ ծովը նետվեցաւ, բայց սուլթանը մինչև կեանքի վերջը հաւատացած էր թէ իր հին ժամացոյցի տեր է և առատ կերպով վարձատրեց կախարդին։ Շատ անգամ հանգամանքների զարմանալի դասաւորութիւնը նպաստում էր Հերմանի հռչակին, որպէս ճշմարիտ կախարդի։ Մի օր, Բրազիլիայից դէպի Եւրոպա ճանապարհորդելով, Ովկիանոսի մէջ տեղ մի շոգենաւի մէջ, շրջապատված բազմաթիւ հասարակութեամբ, Հերման զուարճացնում էր հանդիսականներին իր ձեռնածութիւններով։ «Եթէ դուք ճշմարիտ կախարդ էք, այնպէս արեցէք, որ մեր շոգենաւը ծովի մէջ յանկարծ կանգ առնի։» Հերման ժպտաց ոչինչ չը պատասխանելով,—և նոյն րոպէին զգալի եղաւ շոգենաւում մի զօրեղ ղարկ և շոգենաւը յանկարծ կանգնեց։ Բոլորը զոնատվեցին, ամենքին տիրեց մի անպատմելի սարսափ, նաւապետը սարսափած վեր թռաւ և թողնելով կայուտը շտապեց վերև։ Նաւաստիները նրան զեկուցում տուին, որ շոգենաւի անիւը յանկարծ կոտրվեց։ Ճանապարհը անհնարին էլ շարունակել, բայց արին առաջատները և նաւը կրկին վերադարձաւ Ռիո-Ժանէյրո, որտեղից և դուրս էր եկել։ Մինչև տեղ հասնելը ճանապարհորդները բոլորն էլ իրանց հեռու էին պահում Հերմանից. դժբախտութիւնը, երկիւղը, սարսափը մարդուն մոռոտիպաշտ, նախապաշարված է դարձնում։ Նրանք չէին կամենում ընդունել որ այդ անցքը հանգամանքների մի պատահական բերմունք էր, այժմ նրանք խոր կերպով համոզված էին, թէ Հերման ճշմարիտ մի կախարդ է։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՕՐԵՕԼ, 10 փետրվարի։ Տեղոյս նահանգական դատարանին ներկայացրած է մնանկացած քաղաքային բանկի կոնկուրսի վարչութեան կողմից մի պահանջ, որով նա քաղաքի հասարակութիւնից պահանջում է 840,000 ռուբլի։ Այս գումարում պարունակվում է դրամագլխային պարտք 721,000 և 119,000 ր. տոկոսներ։

ԱԹԷՆՔ, 10 փետրվարի։ Կառավարութեան քաղաքականութեան փոխվելու լուրը յուզմունք պատճառեց ժողովրդի մէջ. ժողովուրդը պահանջեց կառավարութիւնից հետևել ազգային քաղաքականութեանը. Դէլէանիսը յայտարարեց, որ կառավարութիւնը շարունակում է զինուորվել։ Թագաւորը ընդունեց այսօր տաճկական դեսպանին։

ԼՕՆԴՈՆ, 10 փետրվարի։ Երէկ Հայդպարկում կայացաւ սոցիալականների ժողով, որին մասնակցում էին մօտ 20,000 մարդ։ Հռետորները, կանգնած կարմիր դրօշակներով զարդարած կառքերում, արտասանեցին ճառեր, որոնց մէջ յայտնում էին, որ եթէ կառավարութիւնը չի բարեփոխի բանուորների ընկերական դրութիւնը, այն ժամանակ արիւնհեղութիւն կը պատահի։ Ոստիկանութիւնը ձեռքակալեց Բերնտի կառքը։ Բանուորները Հայդ-Պարկից վերադառնալիս ճանապարհին ջարդեցին բոլոր պատուհանները և փորձ արին ներս խուժել Պարլամենտական փողոցը, բայց ոստիկանութիւնը չը թողեց նրանց միանգամայն. վերջապէս ոստիկանութեանը յաջողվեց մաքրել փողոցները՝ աղմկողներից և չատերին ձեռքակալեց։

ՊԵՇՏ, 11 փետրվարի։ Երէկ ժամանեց այստեղ Մեծ Իշխանուհի Ելիսավետա Ֆէօդորովնայի օգոստափառ ծնողը՝ Հէսսէնի մեծ դուքս Լուդովիկ IV իր դուստր Իշխանուհի Իրէնայի հետ միասին։ Կայարանում սիրալիր կերպով հանդիպեցին բարձր հիւրերին թագաւոր Կայսրը և բարձրագոյն անձինք։ Թոյլ է տրված, նախկին օրէնքների վրա հիմնվելով, բոլոր առանց պատենտի բացած գինետան տէրերին վաճառել ոգելից ըմպելիք խանութից դուրսը, բոլոր տօնավաճառների ժամանակ բացի գլխաւոր տօնավաճառներից։ Իրկուտսկի նահանգապետ Նոսովիչ հրաժարեցրած է, իր խնդրին համեմատ, ծառայութիւնից՝ մնալով պատերազմական նախարարութեան հրամանի ներքոյ։ Լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում կազմվում է մի մեծ ակցիոներական ընկերութիւն, որի մասնակցողները բացառապէս ռուսներ են լինելու. ընկերութեան դիտաւորութիւնն է ունենալ զանազան գաւառներում ապրանքների պահեստներ և դրամական փոխառութիւններ անել։ «Новое Время» լսել է, որ երկաթուղու խորհուրդը վճռում է պարտաւորեցնել բոլոր գծերը ոչ թէ միայն զետեղել գների ցուցակներում ուղղակի հաղորդակցութեան տեղափոխութեան վարձի առանձին բաժինները և լրացուցիչ դումարները հաշված իւրաքանչիւր ճանապարհին, այլ և ուղարկած ապրանքների ցուցակներում համապատասխան բաժանմունքներով։

ՊԵՇՏ, 11 փետրվարի։ Պատգամաւորների ժողովում Տիսսան յայտարարեց, որ Աւստրո-Ունգարիայի քաղաքականութիւնը արևելքում չէ ձգտում Բալկանեան թերակղզու բաժանելուն Ռուսաստանի հետ, այլ ճգնաժամի խաղաղ անցնելուն։

ՖԻԼԻՊՊՈՊՈԼ, 11 փետրվարի։ Իշխանը մտադրվում է վերադառնալ Սոֆիա բոլոր պահեստի զօրքերի լիակատար մոբիլիզացիայից և միլիցիան պատերազմական դրութեան մէջ դնելուց յետոյ։

ԱԹԷՆՔ, 11 փետրվարի։ Տաճկական նոր դեսպանը յանձնելով թագաւորին լիազօրութեան թղթերը յայտնեց, որ Սուլթանի ցանկութիւնն է բարեկամական յարաբերութիւններ պահպանել Յունաստանի հետ։ Թագաւորը պատասխանեց մի և նոյն կերպով։ Լուր է տարածվել իբր թէ ռուսական նաւատորմը Սուդի ծոցից պէտք է վերադառնայ դէպի Պիրէյ։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 11 փետրվարի։ Սերբիայի կողմից առաջարկած հաշտական դաշնակցութեան պրոէկտը բաղկացած է միայն մի օրէնքից, որով առաջարկվում է վերականգնեցնել մինչ պատերազմի հրատարակելուց առաջ եղած դրութիւնը։

ՓԱՐԻԶ, 11 փետրվարի։ Իշխան Նապոլեոնը պալատներին ուղարկած նամակում ընդունում է հանրապետութիւնը իբրև հետևանք ընդհանուր ձայնատուութեան, բայց նկատում է մի և նոյն ժամանակ, որ ներկայ հանրապետութիւնը կրում է իր վրա օլիգարխական (սակաւապետական) բնաւորութիւն. նրան պէտք չէ կործանել, այլ վերանորոգել. հանրապետութեան գլուխը (նախագահը) պէտք է ընտրվի անմիջապէս ժողովրդի կողմից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրվարի։ Բարձրագոյն հրամայված է ի կատար ածել ս. սինոդի որոշումն, որով արգելվում է յուղարկաւորութեան հանդէսների դէպի եկեղեցին և գերեզմանոցը դիմելու ժամանակ, պսակներ և այլ նշաններ ու էմբլէմաներ տանելը, որոնք եկեղեցական կամ պետական-պաշտօնական նշանակութիւն չունեն և պօլիցիական իշխանութեան վրա պարտաւորութիւն է դրվում խստութեամբ հսկել այդ բանի մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրվարի։ Զինուորական մինիստրութեան մէջ ծառայող առանձին յանձնարարութեան պաշտօնեայ, գեներալ-մայոր Իշխան Տրուբէցկոյ նշանակված է Մինսկի նահանգապետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրվարի։ «С. Петерб. Вѣдом.» լրագիրը հաղորդում է, որ այժմեան նաւադնայութեան ժամանակ որոշված է տուրք առնել ծովային ճանապարհով ուղարկվող բեռներից առաջվայ չափով, $1/2$% բեռան արժէքից, բացի այն բեռներից, որոնք բերվում են նաւերի և լաստերի վրա Լադոգեան ջրանցքով $1/2$%, Դնէստրի վրա լողող նաւերի բեռներից 1% և արևմտեան —Դվինայի—$1/4$% լրացուցիչ տուրք։

ՎԻԷՆՆԱ, 12 փետրվարի։ Երէկ Զէրնօգորիայի իշխանը ուղևորվեց դէպի Ցէտինիէ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Փետրվարի 11-ին

Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ		$23^3/_4$ պէնս
— — Համբուրգի վրա	—	$202^1/_8$ պֆ.
— — Փարիզի վրա	—	249 սանտ.
Ոսկի — արժէ	— —	8 ր. 31 կ.
Մաքսային կուպօններ	— . . .	8 » 31 »
Արծաթ — —	— . . .	1 » 29 »
Բօրսային դիսկօնտներ	— . . .	$4^1/_2$ և 6%

Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	ր.	87 կ.
— — — — 2-րդ —	99	»	75 »
— — — — 3-րդ —	99	»	25 »
— — — — 4-րդ —	99	»	50 »
— — — — 5-րդ —	99	»	62 »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99	»	62 »
— — 2-րդ —	99	»	75 »
— — 3-րդ —	100	»	25 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	228	»	»
— երկրորդ —	222	»	»
$5^1/_2$% րէնտա	—	»	— »
Ոսկեայ րէնտա.	—	»	— »
Նոր կոնսոլիդած փոխառութիւն. .	—	»	— »
5% գրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդ. ընկ.	152	»	75 »
$5^1/_2$% գրաւական թղթեր խերսօնի			
կալուած. բանկի.	94	»	87 »
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	100	»	— »
— — Պոլտավայի— —	100	»	— »
— — Պետ.Տօլսկ.— —	100	»	— »
— — Կիեվի — —	100	»	— »
— — Մոսկվայի — —	100	»	50 »
— — Բեսարաբ. Տավր.—	99	»	50 »
— — Նիժ. Սամար. —	100	»	— »
— — Վիլնայի — —	—	»	— »
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	94	»	50 »
— —Քութայիսի-18 և 43 տ.	94	»	62 »
Վօլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	489	»	— »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	250	»	— »
Ռիբինսկ-Վօլոգդի ընկ.	82	»	— »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	89	»	87 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	92	»	— »
Օդէսայի — — .	91	»	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը շատ ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 13-ին փետրվարի, ՀԱՅ-ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ խումբը, մասնակցութեամբ յայտնի դերասան պ. ԱԴԱՄԵԱՆԻ կը տայ, հասարակութեան խնդրանքը, ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ „ՔԻՆ“ դրամա, 4 արարուածով, հեղ. Դիւմայի, թարգմ. Աւալեանի։
ՍԿԻԶԲԸ $7^1/_2$ ժամին։ 1—1

„ԱՂԲԻՒՐ“

Լոյս տեսաւ № 2 (փետրուար) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 2

Կատու	Աշխէն
Զորս տարեքրի վէճը.	Սամուէլ Գիւլզադեան
Սալորենի.	Արշակ Մեհրաբեան
Կկու (ոտանաւոր գերմաներէնից).	Բ. Մուրատեան
Իմ հարևանները	Հրահաս
Երկու նաւ (բանաստեղծութիւն)	Ա. Աբէլեանց
Գիւղացու մահը (Էմիլ-Զօլա.	Ն. Տէր-Աւետիքեան
Դէնիս պապին (նահատակ դիտութեան)	
Հերոսական մահ (թարգմ.)	Օր. Շուշանիկ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Խժռողներ (Պրօֆ. Մօդ. Բօղդանով) II Մուկն, III Զղջիկ. . Լ. Մ.-Ադամեան

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարդու դնացքի արագութիւնը։ Թղթեայ դաշնամուր։ Ազատիչ հանդերձ։ Նշանակի արկղներ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Երկու աղքատ	Հայ Վարժուհի
Սէնդրիդենի սարեակը	Ա. Շիրեան

ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

Անեկդոտ։ Միջից կարել (խաղ)։ Հանելուկներ, առաջարկութիւններ։ Կախարդական անիւ։ Շուտասելուկ։
Նախընթաց № 1-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Մի հեռադիր, „Աղբիւրի“ պատասխաններ և ցայտարարութիւններ։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅ 1886 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ։

Дозволено цензурою, Тифлисъ 12-го Февраля 1886 года. Типографія Канцеляріи Главнонач Гражд. час., Лорисъ-Меликовская у., д. каз.